# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրաբեր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրաբեր, djraber@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2016թվականի N 12

## ՋՐԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 3-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ջրաբեր համայնքի ավագանու թիվ 3-րդ արտահերթ նիստի օրակարգը

1 Ջրաբեր համայնքի 2016 թվականի առաջին եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին
2. Ջրաբեր համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության կարգը հաստատելու մասին:
3.Ջրաբեր համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին
4.Ջրաբեր համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին
5.Ջրաբեր համայնքում խմելու ջրի ջրամատակարարման համակարգը <<Հայջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց օգտագործման իրավունքով հանձնելու մասին:
6.Ջրաբեր համայնքի ավագանու 2013 թ. սեպտեմբերի 4-ի N29 և N30 որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -4 Դեմ 0 Ձեռնպահ -0

1. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉԻԿ
2. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՍՏԱՄ
4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐԱ

**Համայնքի ղեկավար՝** ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրաբեր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրաբեր, djraber@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2016թվականի N 13

## ՋՐԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի հաղորդումը 2016թ. առաջին եռամսյակում տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -4 Դեմ 0 Ձեռնպահ -0

1. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉԻԿ
2. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՍՏԱՄ
4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐԱ

Համայնքի ղեկավար՝ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱԲԵՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրաբեր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրաբեր, djraber@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

14 ԱՊՐԻԼԻ 2016թվականի N 14-Ն

## ՋՐԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 182-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10.1-ին հոդվածի, 16-րդ հոդվածի 33-րդ կետի, 20-րդ հոդվածի 3.2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5.1-ին կետի, 33.1-ին հոդվածի 1-4-րդ կետերի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-14-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1-ին հոդվածի 4 րդ մասի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» № 1325-Ն որոշումը,

Համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Ջրաբեր համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՑՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉԻԿ
2. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՍՏԱՄ
4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐԱ

Համայնքի ղեկավար՝ ԳԵՎՈՐԳ ՀԱՑՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱԲԵՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրաբեր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրաբեր, djraber@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2016թվականի N 15-Ն

## ՋՐԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀօրենքի 33.1-ինհոդվածի 3-րդ կետով, 54.1-ին հոդվածի 2-րդ և 3 րդ մասերով,69-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀօրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները, «Քաղաքաշինության մասին» ՀՀօրենքի 13 և 14 հոդվածները և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀօրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 3-րդ կետը,

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ջրաբեր համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը՝ համաձայն հավելվածի։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉԻԿ
2. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՍՏԱՄ
4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐԱ

Համայնքի ղեկավար՝ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱԲԵՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրաբեր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրաբեր, djraber@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

14 ԱՊՐԻԼԻ 2016թվականի N 16-Ն

## ՋՐԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի և 54.1-ին հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդհոդվածի 10.2-րդ կետը և 33.1-ին հոդվածը՝

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ջրաբեր համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրված հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉԻԿ
2. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՍՏԱՄ
4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐԱ

Համայնքի ղեկավար՝ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրաբեր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրաբեր, djraber@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2016թվականի N 17

## ՋՐԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ <<ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, հիմք ընդունելով <<ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ>> փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի մարտի 29-ի N ՊԼ1-03/511 գրությանը

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Ջրաբեր համայնքի սեփականություն հանդիսացող խմելու ջրի ջրամատակարարման համակարգը անհատույց օգտագործման իրավունքով հանձնել <<Հայջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերությանը:
2. <<Հայջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերության առաջարկած իրականացվելիք տարբերակներից համայնքի ավագանին ընտրում N 5 տարբերակը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉԻԿ
2. ՍԱՆՈՒԿՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
3. ՍԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՍՏԱՄ
4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐԱ

Համայնքի ղեկավար՝ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրաբեր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրաբեր, djraber@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ԱՊՐԻԼԻ 2016թվականի N 18

## ՋՐԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի N29 և N30 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Ուժը կորցրած ճանաչել՝

1)Ջրաբեր համայնքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 4-ի <<Ջրաբեր համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին>> N29որոշում
2)Ջրաբեր համայնքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 4-ի <<Ջրաբեր համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու, գործունեության կարգը սահմանելու և հանրային բաց լսումներ կազմակերպելու մասին>> N 30 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉԻԿ
2. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
3. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՍՏԱՄ
4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՐԱ

Համայնքի ղեկավար՝ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ